

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԳԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանը

ք.Հրազդան

25.07.2017թ. ժամը 11.<sup>00</sup>

**ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝**

- Ի.Գաբայան-ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեի նախագահ
- Մ.Հովհաննիսյան-«Կոտայք» ԶՕԸ-ի գլխավոր ճարտարագետ
- Կ.Դադոյան-«Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ, ԶՕԸ-երի համակարգող
- Կ.Եփրեմյան-«Ջրառ» ՓԲԸ տնօրեն

**ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

- Ա.Ավետիսյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Վ.Վարդանյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Մադոյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Գ.Առուստամյան- ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Ռ.Հարությունյան- ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝**

**1.Ոռոգման ջրի մատակարարման վիճակը մարզի համայնքներում:**

*/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/*

**2. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների վիճակը մարզի համայնքներում:**

*/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կ.Թումոյան/*

**3.Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը, մարզի համայնքների խոշոր ապառքատերերի ցուցակները և համայնքների ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները ապառքների գանձման ուղղությամբ:**

*/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական գարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/*

**4. Համայնքային ծառայության խնդիրների և իրավիճակի մասին:**

*/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ. Ալեքսանյան/*

## **ԼՍԵՑԻՆ՝**

1. ՀՀ Կուրայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և քնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանի զեկուցումը մարզի համայնքներում ոռոգման ջրի մատակարարման վիճակի մասին:

*Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն./Կցվում է/:*

Համայնքի ղեկավարները ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեի նախագահ Ի.Գաբայանին հարցեր ուղղեցին խմելու և ոռոգման ջրի մատակարարման հետ կապված տարբեր խնդիրների մասին:

### **Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝**

-Վերոնշյալ խնդիրների վերաբերյալ գրություններն ուղղել ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտե՝ դրանք ուսումնասիրելու և Ջրային կոմիտեի նախագահ Ի.Գաբայանի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի միջև առաջիկայում կայանալիք հանդիպմանը քննարկելու նպատակով:

-Ոռոգման ջրի մատակարարման խնդիրներին հրատապ լուծում տալու համար դիմել անմիջապես «Կոտայք» ՋՕԸ-ին:

-Վիճակագրական հաշվետվությունները ժամանակին ներկայացել ՀՀ վիճակագրական կոմիտե:

-Ակտիվ մասնակցություն ցուցաբերել աշնանը մարզում կազմակերպվող մեծ մարզային ծառատունկին:

2. ՀՀ Կուրայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և քնապահպանության վարչության պետի տեղակալ Կ.Թումոյանի զեկուցումը մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների վիճակի մասին:

*Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն./Կցվում է/:*

### **Հանձնարարվեց՝**

#### **ՀՀ Կուրայքի մարզպետի տեղակալ Վ.Վարդանյանին՝**

-Մարզպետի մոտ քննարկում կազմակերպել մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների պահպանման աշխատանքներն իրականացնող ընկերությունների տնօրենների հետ:

-Ստեղծել աշխատանքային խումբ՝ ներգրավելով նաև համայնքների ներկայացուցիչներին և կազմել ու ներկայացնել ծխացող աղբավայրերի կասեցման կարճաժամկետ գործողությունների ծրագիր:

### **Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝**

-Ակտիվ մասնակցություն ցուցաբերել մարզում հայտարարված աղբահանության «օրինակելի շաբաթ»-ին:

-Հետևողական լինել համայնքների վարչական տարածքներում և ավտոմայրուղիների հարակից տարածքներում կիսաքանդ ավտոմեքենաների առկայությունը բացառելու ուղղությամբ:

3. ՀՀ Կուրայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նախապետյանի զեկուցումը մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը, մարզի համայնքների խոշոր ապառքատերերի ցուցակները և համայնքների ղեկավարների կողմից ապառքների գանձման ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքի մասին:

*Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն./Կցվում է/:*

